

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ թիվ 11

ԳՊՄԻ պատմաբանասիրական ֆակուլտետի խորհրդի 05. 06. 2015թ. նիստի՝

մասնակցությամբ խորհրդի 13 անդամների,

նախագահությամբ դեկան Ս. Հայրապետյանի

ՕՐԱԿԱՐԳ - 1. Ֆակուլտետի հեռակա համակարգի ուսանողների 2014-2015

ուստարվա երկրորդ կիսամյակի քննատոմսերի հաստատում

2. Ընթացիկ հարցեր

ԼՍԵՑԻՆ - Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ֆակուլտետի հեռակա համակարգի ուսանողների 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի ամփոփիչ ստուգումների քննատոմսերի հաստատման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մ.Խաչատրյան, Ա.Հովհաննիսյան, Գ.Խաչիկյան, Գ.Համբարյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Հաստատել մասնագիտական ամբիոնների կողմից ներկա - յացված հեռակա համակարգի ուսանողների 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի ամփոփիչ ստուգումների քննատոմսերը:

ԼՍԵՑԻՆ - Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ֆակուլտետի առկա համակարգի ուսանողների 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի ամփոփիչ ստուգումների կազմակերպման մասին:

Նշվեց, որ հաշված օրեր են մնում 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի ամփոփիչ ստուգումներին, որոնց անցկացման ուղղությամբ ֆակուլտետում արդեն ավարտվում են բոլոր տեսակի նախապատրաստական աշխատանքները, եւ ֆակուլտետը լիովին պատրաստ է 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի ամփոփիչ ստուգումներն անցկացնելու ամենաբարձր մակարդակով՝ ապահովելու համար ուսման որակական չափանիշները, բարձր առաջադիմություն եւ ստուգումների բացարձակ օբյեկտիվություն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Մ.Կուրազյան, Մ.Խաչատրյան, Գ.Հարությունյան, Ս.Պետրոսյան, Ա.Մնոյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Ի գիտություն ընդունել եւ դրական գնահատել դեկանատի աշխատանքը ֆակուլտետի առկա համակարգի ուսանողների 2014-2015 ուստարվա երկրորդ կիսամյակի ամփոփիչ ստուգումների կազմակերպման ուղղությամբ:

ԼՍԵՑԻՆ - Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ֆակուլտետի հեռակա համակարգի ուսանողների 2014-2015 ուստարվա ամառային քննաշրջանի նախապատրաստման մասին:

Նշվեց, որ հեռակա համակարգի ուսանողների 2014-2015 ուստարվա ամառային քննաշրջանը սկիզբ կառնի երկու շաբաթից, եւ դեռ բավականին ժամանակ կա, որպեսզի դեկանատը ավարտի բոլոր նախապատրաստական աշխատանքները: Մտահոգիչ միակ հանգամանքն այն է, որ հեռակա համակարգի բազմաթիվ ուսանողներ առայսօր երկրորդ կիսամյակի վարձավճարները չեն մուծել, ինչը կարող է օբյեկտիվ պատճառ հանդիսանալ քննաշրջանին նրանց չմասնակցելուն:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ա.Նորիկյան, Գ.Կարապետյան, Ս.Կուրազյան, Ա.Վարդանյան, Ա.Հովհաննիսյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը ֆակուլտետի հեռակա համակարգի ուսանողների 2014-2015 ուստարվա ամառային քննաշրջանի նախապատրաստման մասին ընդունել ի գիտություն եւ համարել բավարար:

ԼՍԵՑԻՆ - Ֆակուլտետ դեկան Ս.Հայրապետյանի հաղորդումը իրավագիտության ակա համակարգի 2-րդ կուրսի ուսանողուհի Շուշաննա Նիկողոսյանի կողմից կիսամյակի ամփոփիչ ստուգումների հանձնման ժամկետի տեղափոխման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ - Ն.Ստեփանյան, Ա.Վարդանյան, Ս.Պետրոսյան

ՈՐՈՇԵՑԻՆ - Միջնորդել ռեկտորատին՝ հիմք ընդունելով բուժվելու նպատակով բացակայելու մասին իրավագիտության առկա 2-րդ կուրսի ուսանողուհի Շուշաննա Նիկողոսյանի կողմից ներկայացված հիմնավորումը, 2014-2015 ուստարվա 2-րդ կիսամյակի նրա ամփոփիչ ստուգում-

ները ավելի ուշ՝ քննաշրջանի ժամկետներից դուրս կազմակերպել
թույլատրելու առաջարկով:

Ֆակուլտետի դեկան
նիստի քարտուղար

Ս.Հայրապետյան
Է..Չոբանյան